Հայ-Ռուսական համալսարանում գործող
ՀՀ ԲՈԿ-ի իրավագիտության 063 մասնագիտական խորհրդին

(Հայաստանի Հանրապետություն, 0051,
ք. Երևան, Հովսեփ Էմինի փ. 123)

ԿԱՐԾԻՔ

Սաբինա Թեմուրի Մադոյանի «Տարածքային փոփոխությունների իրավաչափության հիմքերը ժամանակակից միջազգային իրավունքում» վերտառությամբ ԺԲ.00.06 - «Միջազգային իրավունք» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ներկայացված ատենախոսության վերաբերյալ

Ատենախոսական աշխատանքը նվիրված է պետությունների տարածքային փոփոխություններին վերաբերող մի շարք միջազգային իրավական վիճահարույց հիմնահարցերին: Աշխատության արդիականությունը պայմանավորված է ինչպես տարածքային վեճերի տեղով և կարևորությամբ միջպետական հարաբերություններում, այնպես էլ ընթացիք զարգացումներով ինչպես տարածաշրջանում, այնպես էլ ամբողջ աշխարհում: Պետությունների տարածքային բաժանման, պետությունների տարածքային տիտղոսի հետ կապված հարցերը շարունակում են մնալ ամենախնդրահարույց և սուր հարցերից ինչպես միջպետական հարաբերությունների, այնպես էլ միջազգային իրավունքի համար:

Աշխատանքի գիտական նորույթը կասկած չի առաջացնում, ինչը պայմանավորված է առաջ քաշվող հարցադրումներով և առաջարկվող

մոտեցումներով և դիրքորոշումներով: Տարածքային փոփոխությունների միջազգային իրավաչափության համալիր ուսումնասիրությունը անկասկած նոր հնարավորություն է խորությամբ հետազոտել ժամանակակից միջազգային իրավակարգի առանցքային հիմնահարցերը առաջարկելով ինքնուրույն լուծումներ, որոնք կարող են ունենալ նշանակալի տեսական և գործնական նշանակություն:

Հեղինակն ուսումնասիրության համար ընտրել է որոշակի մեթոդաբանական հիմք, մասնավորապես՝ հետազոտության պատմահրավական, համեմատական իրավական, համակարգային կառուցվածքային մեթոդը: Աշխատանքը հատկապես արժեքավորվում է միջազգային պրակտիկային վերաբեվող բազմաթիվ փաստաթղթերի ուսումնասիրությամբ, ընդ որում խոսքը գնում է ինչպես պատմական, այնպես էլ ոչ վաղ անցյալի փաստաթղթերի մասին: Ինչպես իրավացիորեն նշում է հեղինակը. «Ցանկացած իրավական հետազոտություն անբաժանելի է նորմատիվ ակտերի ուսումնասիրությունից և դրանց դրույթների մեկնաբանությունից: Հեղինակը ելնում է նրանից, որ իրավունքը դինամիկ փոփոխվող կատեգորիա է՝ անմիջականորեն կախված սոցիալական հարաբերությունների վիճակից, ինչը հատկապես կարևոր է տարածքային ինստիտուտի ուսումնասիրության մեջ»:

Այդպիսով, աշխատության մեջ ուսումնասիրվում և ամփոփվում է մասնագիտական գրականություն լայն շրջանակ, միջազգային և ներպետական դատական պրակտիկա, միջազգային իրավական ակտեր և այլ փաստաթղտեր:

Ատենախոսությունը կազմված է ներածությունից, վեց պարագրաֆ ամբողջացնող երեք գլուխներից, եզրակացությունից, ինչպես նաև օգտագործված գրականության, իրավական, ակտերի և էլեկտրոնային կայքերի ցանկից: Աշխատության կառուցվացքը տրամաբանական է և անմիջականորեն բխում է հետազոտության նպատակներից և խնդիրներից: Հետազոտությունում հմտորեն օգտագործվում է մասնագիտական լեզվական պաշարը, շարադրանքը և ձևավորումը համապատասխանում է ընդունված գիտական չափանիշներին:

Ներածությունում հեղինակը հիմնավորում է հետազոտական թեմայի արդիականությունը, բացատրում է դրա նպատակը և առանձնացնում դրանով պայմանավորված խնդիրները, ներկայացնում է աշխատանքի գիտական նորույթը և ձևակերպում պաշտպանության համար ներկայացված հիմնական դրույթները: Նաև ատենախոսության ներածության մեջ հեղինակը նկարագրում է ուսումնասիրության մեթոդաբանական, տեսական և էմպիրիկ հիմքերը:

Ատենախոսության առաջին գլուխը նվիրված է տարածքային տիտղոսի ձեռքբերման դասական հիմքերին: Ողջունելի է, որ հեղինակը հենվում է միջազգային դատարանների իրավական դիրքորոշումների, հեղինակավոր փորձագետների կարծիքների վրա, իր եզրակացությունը կազմում տարբեր դիրքորոշումների համադրման հիման վրա: Հատկապես ուշադրության է արժանի այն, որ այստեղ վերլուծության առարկան այն հարցն է, թե արդյո՞ք թուրքական տիտղոսը հաստատվել է 1921 թվականի Մոսկվայի և Կարսի պայմանագրերով Թուրքիային զիջված պատմական հայկական տարածքների նկատմամբ պրեսկրիպցիայի ուժով: Հետազոտության արդյունքում հեղինակը հանգում է հետևյալ եզրակացությանը. «Պրեսկրիպցիայի և օկուպացիայի ինստիտուտների ուսումնասիրությունը միջազգային իրավունքի էվոլյուցիայի համատեքստում ցույց է տալիս, որ տարածքային տիտղոսը պրեսկրիպցիայի հիման վրա ամրապնդելու դեպքում ամենակարևոր նախապայմանը պետության ենթադրյալ կամ բացահայտ հրաժարումն է իր տիտղոսից: Օկուպացիայի հիման վրա տարածքային տիտղոսի ամրապնդելու դեպքում այլ պետությունների կողմից պահանջներից հրաժարվելը կարող է ծառայել միայն որպես լրացուցիչ հիմք պետության տիտղոսը հիմնավորելու համար, բայց ոչ որպես առանցքային հիմք»:

Աշխատության երկրորդ գլուխում դիտարկվում է միջազգային իրավունքի հիմնարար սկզբունքներից մեկը՝ ժողովուրդների ինքնորոշման իրավունքն տարածքային փոփոխությունների համատեքստում: Հեղինակը քննարկում է ժողովուրդների ինքնորոշման իրավունքը որպես տարածքի տիտղոսի հիմք ապագաղութացման համատեքստում, դիտարկում է անկախ պետություն ստեղծելու խնդիրը: Հատկապես գովելի է այն, որ այս գլխում մանրամասնորեն

ուսումնասիրված են ինչպես միջազգային իրավական փաստաթղթերը, այնպես էլ միջազգային իրավական պրակտիկան, ՄԱԿ-ի Միջազգային դատարանի իրավական դիրքորոշումները և ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի գործունեությունը:

Երրորդ գլուխի հետազոտության առարկան է uti possidetis juris սկզբունքը: Այս սկզբունքի համատեքստում հատուկ ուշադրություն է դարձվում ինչպես ապագաղութացման, այնպես էլ ավելի առդի զարգացումներին: Նշված գլխի շրջանակներում հեղինակը նաև անդրադառնում է 1921 թվականի Մոսկվայի և Կարսի պայմանագրերի վավերության խնդրին: Հատկանշական է հեղինակի եզրակացությունը առ այն. «Ինչ վերաբերում է 1921 թվականի հոկտեմբերի 13-ի Կարսի պայմանագրին, ապա ակնհայտ է, որ այն ստորագրվել է ուժի կիրառման սպառնալիքի ներքո և հանգեցրել է Հայաստանի տարածքային զգալի զիջումների: Այս պայմանագիրը Մոսկովյան պայմանագրի շարունակությունն է և հստակորեն ապահովել է Թուրքիայի նկատմամբ բոլշևիկյան Ռուսաստանի ստանձնած պարտավորությունների կատարումը: Եվ հաշվի առնելով այն հանգամանքը, որ քսաներորդ դարի երկրորդ տասնամյակում արդեն սկսվել էր ուժի կիրառման արգելքի ձևավորումը որպես ընդհանուր միջազգային իրավունքի բաղկացուցիչ մաս, իսկ այս պայմանագրերի մասնակիցների համար վերը նշված սկզբունքը պարտադիր էր և՛ որպես սովորույթ, և՛ որպես պայմանագրային նորմ, ակնհայտ է դառնում, որ Կարսի պայմանագրի վավերականությունը կասկածելի է և անհրաժեշտության դեպքում կարող է վիճարկվել»:

Սաբինա Մադոյանի ատենախոսությունը, միանշանակ դրական գնահատելով որպես միջազգային իրավական կարևոր խնդրիրների ինքնուրույն և արժեքավոր հետազոտություն՝ նաև պետք է նշել աշխատանքում տեղ գտած որոշ վիճահարույց դրույթները կամ թերություններն: Մասնավորապես՝

1. Առաջին գլխի առաջին պարագրաֆում հեղինակը անդրադառնում է Թուրքիայի տարածքային տիտղոսի հաստատման հավանականությանը պրեսկրիպցիայի ուժով՝ Կարսի և Մոսկվայի պայմանագրերով Թուրքիայի վերահսկողությանն անցած հայկական պատմական տարածքների նկատմամբ: Հեղինակը քննարկում է Հայաստանի անկախության մասին հռչակագիրը, 2009 թվականի

հոկտեմբերի 10-ին Ցյուրիխ քաղաքում ստորագրված Հայաստանի Հանրապետության և Թուրքիայի Հանրապետության միջև արձանագրությունները, Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի համահայկական հռչակագիրը: Միևնույն ժամանակ, ցանկալի կլիներ, որ հեղինակը այս համատեքստում քննարկեր նաև ՀՀ իշխանությունների դիրքորոշումները առ այնլ, որ Հայաստանը տարածքային պահանջներ Թուրքիայից չունի: Օրինակ, 2015թ. ապրիլի 24-ին Թուրքական «Հյուրիեթ» թերթին տված հարցազրույցում ՀՀ երրորդ նախագահ Սերժ Սարգսյանի նշել է. «Հայաստանի Հանրապետությունն, իր անկախացումից ի վեր, երբեք Թուրքիային կամ որևէ այլ երկրի տարածքային պահանջներ չի ներկայացրել: Մեր պետության արտաքին քաղաքական օրակարգում նման խնդիր չի եղել և չկա: Սա հստակ է»:

2. Հեղինակը դիտարկելով uti possidetis սկզբունքի կիրառումը ինչպես հետգաղութային, այնպես էլ ժամանակակից ենթատեքստում առանձնահատուկ անդրադարձ է կատարում նաև Խորհրդային Միության փլուզման գործընթացին և հետխորհրդային պետությունների անկախացմանը: Այդ շրջանակներում հեղինակը նաև դիտարկում է Ալմա-Աթայի համաձայնագրին, որը, ինչպես հայտնի է, վերջին շրջանում առանձնակի կարևորում է ստացել մեր տարածաշրջանում: Այս կապակցությամբ, մեր կարծիքով, աշխատությունը միայն կշահեր եթե հեղինակը բացի uti posidentis սկզբունքի ընդհանուր նշանակության գնահատականից և իրավական բնույթի բացահայտումից նաև նշեր, թե ինչքանով է այդ սկզբունքը արտացոլվել Ալմա-Աթաի համաձայնագրում և ինչ արժեքավորում ունի այդ ենթատեքստում Հայաստանի կողմից ներկայացված վերապահումը:

3. Աշխատության օգտագործված աղբյուրների և գրականաության ցանկում առկա են որոշ տեխնիկական թերացումներ:

Վերը նշված հարցադրումները, բնականաբար, չեն նվազեցնում ատենախոսական աշխատանքի արժանիքները և գիտական նշանակությունը:

Ամփոփելով վերոշարադրյալը՝ պետք է փաստել, որ գրախոսվող ատենախոսությունը պատրաստված է գիտական պատշաճ մակարդակով: Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հեղինակի թվով 6 գիտական հրապարակումներում: Սեղմագրի բովանդակությունը համապատասխանում է ատենախոսության բովանդակությանը:

Սաբինա Թեմուրի Մադոյանի «Տարածքային փոփոխությունների իրավաչափության հիմքերը ժամանակակից միջազգային իրավունքում» վերտառությամբ թեկնածուական ատենախոսության վերլուծությունը հիմք է տալիս եզրակացնելու, որ այն համապատասխանում է ՀՀ կառավարության 1997 թվականի օգոստոսի 8-ի թիվ 327 որոշմամբ հաստատված «ՀՀ-ում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգ»-ով ատենախոսությանը ներկայացվող պահանջներին: Հեղինակը ցուցաբերել է գիտահետազոտական-վերլուծական ընդունակություններ, կատարել է բազմակողմանի հետազոտություններ, ներկայացրել է պատշաճ մակարդակի տեսագործնական աշխատանք, որի համար կարող է արժանանալ ԺԲ.00.06 - «Միջազգային իրավունք» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի հայցվող գիտական աստիճանի շնորհման:

Պաշտոնական ընդդիմախոս՝
Իրավաբանական գիտությունների թեկնածու
Գ. ԴԱՎԹՅԱՆ
03.07.2023թ.